



## Հայկական գիտահետազոտական հանդույց Armenian Research & Academic Repository



Ասուն աշխատանքն արտանագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասուրյաթե 3.0» արտանագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենը և տարրելը կուրք ցանկացած ձևաչափով կամ եղիսով  
ձեռփոխել կամ օգտագործել առնա կուրք ստեղծելու համար ենթադրվում են համար նորը

You are free to:


Share – copy and redistribute the material in any medium or format

Adapt – remix, transform, and build upon the material

ԳԵՎՈՐԳ ԱՇԽԵՆԻ

# ՄԱՐԳԱՐԻՏԱՆԵՐ

ԴՐԱՄԱ 1 ԳՈՐԾ 2 ՊԱՏԿ.



Թ Ի Ֆ Լ Ի Ս

բ բ տարան թ. 8. Դ. Ա. Պոլիտր. Եամ. ՀՀ բնի փողոց Ա 3

1923

Խաչված № 101

Տիֆլիս

Տիրայ 1560 էկ.



ՀՀՀ


891.99

Ա

# ՄԱՐԳԱՐԻՏԱՆԵՐ

ԴՐԱՄԱ 1 ԳՈՐԾ. 2 ՊԱՏԿ.


A 16041



Թ. Ի. Ֆ. Լ. Ի. Ս.

5 բղ. տպաքան Ժ. Տ. Գ. Խ. Պոլիգր. Բաժ. Լենինի փողոց № 3

1923





# ՄԱՐԳԱՐԻՏՆԵՐ

ԴՐԱՄԱ ՄԵԿ ԴՈՒՇԱՀՈՒԹԵԱՄԲ

## Ա. ՊԱՏԿԵՐ

Շքեղ պարագ. ձախ անկիւնի խորքում երկաթե արկդ. աջ և ձախ դռներ՝ ծածկված մութ դույնի վարագույրներով. ձախ դռնը բաց է. կանգնած են երկու զինված պահապաններ. խորքում մեծ պատուհաններ, վորոնց վեղկերը հանված են ու ծածկված են մութ դույնի վարագույրներով. մեջ տեղի երեք պատուհաններից երեսում է այգի, վորը գեղեցիկ ծաղիկներով, թփերով, ծառերով և արեկ ճառագայթներից թափանցիկ կանաչ տերևներով՝ թողնում է դիւթական տպավորութիւն: Զախ տռաջակողմը, բազկաթոռի վրա նստած է 45 տարեկան իշխանը, խրոխտ դեմքը դեպի այգին. առաջը դրած է սեղան, վորի վրա դարսած են մատեաններ, թղթեր և այլ իրեր: Պատուհանի տռաջ կանգնած է իշխանի 18 տարեկան աղջիկը և դիտում է այգին:

ԻՇԽԱՆՈՒՀԻ. (Մոտենում է իշխանին). Հայրիկ, հրամայիր, վոր ծառաները վարագույրները բանան, տես ինչպես գեղեցիկ է ընութիւնը... Միշտ նստած այստեղ շարունակ մտածում ես, դու չես սիրում բը նութիւնը...

ԻՇԽԱՆ. Երբ ես էլ երիտասարդ էի, քեզ նման սիրում էի ընութիւնը, զվարճանում էի... Դեհ, զանգահարիր, ծառաները կը դան...

(Իշխանութիւն զանգահարում է, մտնում են ու հադրւստներով ծառաներ):

**ԻՇԽԱՆ.** Բացեք վարագույրները...

(Ծառաները բարձրացնում են վարագույրները և դուրս դնում, իսկ բնում է այդին իր ամբողջ դեղեցկութեամբ):

**ԻՇԽԱՆՈՒՀԻՆ.** (նստում է իշխանի մօս ցածր աքոնի վրա). Հայրիկ, վորքան գեղեցիկ է բնութիւնը, ինչպիս թափանցիկ են երեսում արեի ճառագայթների տակ ծառերի կանաչ տերևները... Իսկ այնտեղ, հեռվում վիթխարի լիռները... ջրվեժները... վճիռ աղբիւրները... Միթե մենք պետքէ բաժանվենք, զրկվենք այս հրաշալի բնութիւնից... Վորքան լավ կը լիներ եթե ապրեինք հավիտեան...

**ԻՇԽԱՆ.** Հավիտեան ապրել, հավիտեան վայելել բնութիւնը՝ կարելի է միայն հեքեաթներում...

**ԻՇԽԱՆՈՒՀԻՆ.** Եթէ մեղ համար էլ գոյութիւն ունենային հեքեաթներ և մենք ապրեինք հավիտեան, հավիտեան վայելեինք կեանքը, անհուն տիեզերքի հրաշալիքները...

(Պառզա. մայր մտնող արեի ճառագայթները դառնում են աղոտ այգին ծածկվում է կապույտ մարախուղով):

**ԻՇԽԱՆՈՒՀԻՆ.** (Ակնարկում է պահապաններին). Հայրիկ, ինչու են կանգնած այստեղ. ինձ թվում է, վոր դու բանտարկված, կաշկանդված ես... Այս բոպեիս նստած եմ վոտքերիդ մոտ, բայց ինձ թվում է վոր զտնվում եմ քեղանից շատ հեռու... Ես սրանց ներկայութիւնը չեմ կարողանում տանել...

**ԻՇԽԱՆ.** Ինչու...

**ԻՇԽԱՆՈՒՀԻՆ.** Երբ ես փաղաքշում եմ, ուզում եմ

լինել քեզ մոտ, թվում է վոր այս պահապանները կարող են հարձակվել և վոչնչացնել ինձ...

**ԻՇԽԱՆ.** Վոչնչացնել քեզ... Նոցա ձեռքերը երբեք, երբեք չեն բարձրանա քեզ վրա...

**ԻՇԽԱՆՈՒՀԻ.** Եթե որանք այստեղ չը լինեին վորքան լավ կը լիներ... (Զբաղվում է վզին զցած մարգարտե շարաններով):

**ԻՇԽԱՆ.** (Մտազբադ, ոյում է ազգկա մազեր). Ո՞վ զիտէ, գուցե և զա ժամանակ՝ մնամ առանց պահապանների... Քեզ համար այդ անսպասելի կը լինի... Գուցե և դժբախտութիւն...

(Հանկարծ շարանների թելերը կտրավում են, մարդարիտները ցըրիվ են դալի):

**ԻՇԽԱՆՈՒՀԻ.** Հայրիկ, ինչպես հավաքեմ մարդարիտներս, այս ի՞նչ եղավ... (Ցույց է տալի դատարկ քելերը). ցրիվ եկան մարդարիտներս...

(Շեմքին երեսում են ցնցոտիներով ծածկված, վոտաբորիկ երկու մանսուկ, ձեռքներին վոսկէ կաթսա, ձողի վրա անցկացրած. կանդ են առնում պահապանների տռաջ, վորոնք չեն թույլ տալի ներս դալու):

**ԻՇԽԱՆ.** (Հրամայական եվ բարձր ձայնով պահապաններին). Թողեք, դրանք ինձ մոտ են դալի...

(Մանուկները մտնում են դահլիճ և դալիս են տռաջ):

**ԻՇԽԱՆՈՒՀԻ.** Հայրիկ, մարդարիտներս չեմ կարող հավաքել, այս կոպիտ և գուեհիկ պահապանները կը տրուեն, կը վոչնչացնեն...

(Մանուկները կանգնում են իշխանի տռաջ):

**ԻՇԽԱՆՈՒՀԻ.** (Մանուկներին). Ինչու եք եկել այստեղ, ինչու եք այդպես նիհար, հանգած աչքերով և ի՞նչ եք բերել վոսկե կաթսայով...

Ա. ՄԱՆՈՒԿ. Մեր աչքերը հանգած են, մենք կը-  
մախք ենք, մենք բորիկ ենք, վորովհետեւ այս պահա-  
պանները վոր կանգնած են այստեղ, այդպես են ցան-  
կանում...

ԻՇԽԱՆՈՒՀԻ. Ինչու...

Ա. ՄԱՆՈՒԿ. Կատարում են հայրիկիդ հրամանը,  
ահա հայրիկիդ հրամանով այս կաթսայի մեջ հավաքել  
ենք արցունքներ և բերել այստեղ...

ԻՇԽԱՆՈՒՀԻ. Հայրիկ, ինչու համար են բերել  
արցունքները...

ԻՇԽԱՆ. Քեզ համար բերել են մարդարիտներ...  
(Վեցնում է կարսան). Դու այս բոպեիս անհանգստա-  
նում էիր վոր վզիդ մարդարիտները ցըիվ եկան, բայց  
ահա (կարսայից հանում է մի քանի մարգարտե շարան-  
ներ). Ես հանում եմ այս կաթսայից քեզ համար նոր  
մարդարիտներ (տալիս է իշխանուհան, ապա անցնում  
է ձախ կողմ, կարսայից հանում է անհատնում մարգա-  
րտե շարաններ եվ դարսում երկարէ սնդուկի մեջ):

ԻՇԽԱՆՈՒՀԻ. Ես ձեզ տեսնելուն պես խղճացի,  
բայց այժմ համոզվում եմ, վոր դուք, այդպես վոքը բիկ-  
ներդ խոսում եք սուտ...

Բ. ՄԱՆՈՒԿ. Մենք կաթսայով բերում ենք ար-  
ցունքներ, բայց ձեր հայրը հենց վոր ձեռքը տանում  
է կաթսան, արցունքները դառնում են մարդարիտներ...

ԻՇԽԱՆՈՒՀԻ. Ես չեմ հասկանում...

Բ. ՄԱՆՈՒԿ. Այս ծառերի, անուշահոտ ծաղիկ-  
ների հետեւմ՝ մեր դաշտերը ծածկված են խրամատ-  
ներով և մահն է սավառնում. այնտեղ է տանջանքը,  
տառապանքը, այնտեղ լալիս են ամենքը...

Ա. ՄԱՆՈՒԿ. Մեզ մոտ երկինքը պատած է ծխով,

անդադար ծխում են ծխնելույղները, աշխատում ենք շարունակ, հանգիստ օր չունենք, բայց միշտ տկլուր ենք ու քաղցած...

**Բ. ՄԱՆՈՒԿ.** Ճեր հայրիկի ձեռքերը դիւթական ույժ ունեն և այս զինքերը վոր կրում են պահապանները, կախարդված են...

**Ա. ՄԱՆՈՒԿ.** Երբ կաթսան լցվում է արցունքով, ամենքը ասում և կրկնում են վոր այս ամենը վոչ սկիզբ ունեն և վոչ վերջ...

**ԻՇԽԱՆ** (‘Դատարկ կաթսան տալիս է մանուկներին).

**Զգույշ եղք և ուշադիր...**

Մանուկները կաթսան վերցնում են, դանդաղ քայլերով դուրս են գնում. իշխանունին մարդարիտները դիտում է, ուղում է կապել վղին, բայց միտքը փոխում է և պահում է Ճերքին. Այդին այլնո չի երեսում, դահլիճում համարեա թե մութն է):

**ԻՇԽԱՆՈՒՀԻՆ.** Հայրիկ, վորտեղ են ապրում այդ մանուկները...

**ԻՇԽԱՆ.** (Նստում է). Ներքենաւմ...

**ԻՇԽԱՆՈՒՀԻՆ.** Ի՞նչպիս նիհար են... Նրանց գունատ դեմքերը... Հանգած աչքերը... Միթէ այնտեղ, ներքիւ վում արև չի ծագում:

**ԻՇԽԱՆ.** Դու դեռ երիտասարդ ես և անփորձ...  
(պառզա):

**ԻՇԽԱՆՈՒՀԻՆ.** Հայրիկ, մութն է, մենք նստել ենք խավարի մեջ... (Զանգահարում է, մտնում են ծառանիւրը):

**ԻՇԽԱՆ.** Ի՞նչու համար կանչեցիր ծառաներին...

**ԻՇԽԱՆՈՒՀԻՆ.** Հայրիկ, վառենք ջահերը...

**ԻՇԽԱՆ.** Հարկավոր չեն ջահերը (Բացասական նշան է անում ծառաներին):

ԻՇԽԱՆՈՒՀԻՒ. Հայրիկ...

ԻՇԽԱՆ. Ես ուզում եմ լսել երաժշտութիւն... (Դառնում է ծառաներին). Թող նվագեն (Ծառաները դուրս են գնում, լսվում է երաժեսուրիւն):

ԻՇԽԱՆՈՒՀԻՒ. Խավարի մեջ երաժշտութիւն...

ԻՇԽԱՆ. Ես սիրում եմ խավարը...

ԻՇԽԱՆՈՒՀԻՒ. Հայրիկ, դու սիրում ես խավարը...

ԻՇԽԱՆ. Տարորինակ է թվումքեզ, հա, հա, հա...

ԻՇԽԱՆՈՒՀԻՒ. Հայրիկ...

ԻՇԽԱՆ. Միրում ես կեանքը, ուզում ես վայելել բնութիւնը, սակայն դու չը գիտես ի՞նչ է կեանքը... Ուզում ես ապրել հավիտեան, վառել ջահերը և զվարձանալ, հա, հա, հա... (Երաժեսուրիւնը դիվային քրիզ է արձակում): Դու հարց ու փորձ էիր անում մանուկներին... Հարցնում էիր նրանց՝ ինչու էք այդպես նիհար, ինչու են ձեր աչքերը հանգած...

ԻՇԽԱՆՈՒՀԻՒ. Ես ուզում եմ իմանալ...

ԻՇԽԱՆ. Իմանալ...

ԻՇԽԱՆՈՒՀԻՒ. Այո, իմանալ և հասկանալ...

ԻՇԽԱՆ. Մի քանի ըստե տոտջ դու դվարձանում էիր զեղեցիկ ծառերով, ծաղիկներով...

ԻՇԽԱՆՈՒՀԻՒ. Իսկ այժմ...

ԻՇԽԱՆ. Իսկ այժմ ուզում ես իմանալ ամեն ինչ... Շատ լավ (Պառւզա): Ես կը հրամայեմ ծառաներիս... Դու կը տեսնես, կը հասկանաս ամբողջ կեանքը...

ԻՇԽԱՆՈՒՀԻՒ. Հայրիկ, ուրեմն կը տեսնեմ, կը տեսնեմ ամեն ինչ...

ԻՇԽԱՆ. Այո, (Վեր է կենում). Կը տեսնես կեանքը իը ամբողջ զեղեցկութեամբ...

ԻՇԽԱՆՈՒՀԻ. Հայրիկ, վառենք ջահերը, և վախենում եմ խավարից...

ԻՇԽԱՆ. Հարկավոր չեն ջահերը...

(Իշխանուհին վիրավորված անցնում է մի կողմ. Զախ դռնից մտնում է Իշխանի խորհրդականը սև հագուստով, փողով լիբ քսակեները դարսում է սեղանի վրա):

ԻՇԽԱՆ. Աղջիկս հարցնում է՝ ինչո՞ւ են այնտեղ ներքենում ամենքը դունատ, հանգած աչքերով... Ուզում է խմանալ, հասկանալ...

ԽՈՐՀՈՂԱԿԱՆ. Խմանալ...

ԻՇԽԱՆ. Թող տեսնի իսկութեամբ... Թող բացվեալանդանոցը իր ամրող սարսափներով... (Դիմում են դեպի դռոր): Լսիր, դարձեալ կուղարկես այնտեղ, հասկանո՞ւմ ես...

ԽՈՐՀՈՂԱԿԱՆ. Ռւղարկելը հեշտ է... Սակայն...

ԻՇԽԱՆ. Սակայն ի՞նչ, ասան...

ԽՈՐՀՈՂԱԿԱՆ. Այն կողմը վառվել են խարույկներ, կայծերը արդեն գալիս են մեր կողմը...

ԻՇԽԱՆ. կարմիր խարույկներ...

ԽՈՐՀՈՂԱԿԱՆ. Թշնամու բանակում սկսվել է խլոտում...

ԻՇԽԱՆ. Ավելի լավ. մեր զորքերը կը դրավեն նրանց քաղաքները...

ԽՈՐՀՈՂԱԿԱՆ. Թշնամին փախչում է, թողնում է զենք, ուտելիք, հաց... Երբ մտնում ենք նրանց քաղաքները՝ դիմավորում են ուրախութեամբ..., Մեր զորքերը վարակվում են նրանցից...

ԻՇԽԱՆ. (Զայրացած). Ինչպես... Ես բոլորին կը խեղղեմ արեան մեջ... Մահ, մահ դավաճաններին...

(Դուքս են գնում, պառւղա, նախասինեակում երեսում է ուղեցիկ երիտասարդ, վառած ջահը ձեռքին. վատահ քայլերով մոտենում է դռներին):

**ԻՇԽԱՆՈՒՀԻՄ.** Այդ ի՞նչ օտարական է...

**ԵՐԻՏԱՍԱՐԴԻ.** Ես օտարական չեմ... (Մտնեմ և դահլիճ):

**ԻՇԽԱՆՈՒՀԻՄ.** Ինչու ես եկել այսուղ այս ժամին և ի՞նչ ես ուզում...

**ԵՐԻՏԱՍԱՐԴԻ.** Ես եկել եմ քեզ համար, դու վախենում ես խավարից...

**ԻՇԽԱՆՈՒՀԻՄ.** Ես սիրում եմ արևի ճառագայթները, լույսը... Այս խավարը խեղդում է ինձ...

**ԵՐԻՏԱՍԱՐԴԻ.** Քո աչքերը խավարի մեջ փայլում են, խավարը վոչինչ է քեզ համար...

**ԻՇԽԱՆՈՒՀԻՄ.** Ո՞վ ես և ինչու ես եկել... Դու ինձ համար անծանոթ ես և օտար...

**ԵՐԻՏԱՍԱՐԴԻ.** Ես քո առաջ կը բանամ սիրոս և դու կը ճանաչես ինձ...

**ԻՇԽԱՆՈՒՀԻՄ.** Միթե չես վախենում մահից...

**ԵՐԻՏԱՍԱՐԴԻ.** Եթե մահս պետքէ տեղի ունենա վոտքերիդ տակ՝ ես պատրաստ եմ ընզունելու. Ես, ես ուզում եմ ապրել միայն քեզ հետ և քեզ համար... Նայում եմ աչքերիդ և ինձ երջանիկ եմ զղում... Միրսս բարախում է ուրախութիւնիցս...

**ԻՇԽԱՆՈՒՀԻՄ.** Քո ձայնը, քո անկեղծութիւնը կախարդում է ինձ, ես պատրաստ եմ քո ամեն մի խոսքը լսելու...

**ԵՐԻՏԱՍԱՐԴԻ.** Վորքան երջանիկ եմ ես, վորքան բաղդավոր...

**ԻՇԽԱՆՈՒՀԻՄ.** Դու երջանիկ ես, դու սիրում ես

ինձ, սիրում ես կեանքը... Ես քեզ կը տանեմ ինձ հետ հեքեաթների աշխարհ, վորտեղ մարդիկ վայելում են բոլոր բարիքները և վորտեղ ինձ ամենքը զարդարում են մարդարիտներով...

**ԵՐԻՍԱՍԱՐԴԻ.** Ես քեզ չեմ զարդարի այդպիսի մարդարիտներով... (Զգում է ռարանները, մարզարիտները ցրիվ են գալի). Կը չքանա այս մահասասուր խավարը և քեզ կը զարդարեմ ճշմարտութեամբ և անկեղծ սիրո ճառագայթներով...

**ԻՇԽԱՆՈՒՀԻՆԻ.** Սիրում ես ինձ, եկել ես ինձ համար այստեղ, խոկ ես ուզում եմ հեռանալ... Գնալ...

**ԵՐԻՍԱՍԱՐԴԻ.** Գնալ... Ո՞ւր...

**ԻՇԽԱՆՈՒՀԻՆԻ.** Ուզում եմ տեսնել ի՞նչ է կատարվում ներքեաւմ... Այնտեղ լալիս են ամենքը... Օ՛հ, եթե ես կարողանայի փախչել այստեղից...

**ԵՐԻՍԱՍԱՐԴԻ.** Ուզում ես գնալ, տեսնել նրանց...

**ԻՇԽԱՆՈՒՀԻՆԻ.** Այս...

**ԵՐԻՍԱՍԱՐԴԻ.** Ես կուղեկցեմ քեզ...

**ԻՇԽԱՆՈՒՀԻՆԻ.** Դեհ, գնանք, գնանք միասին... Դու գիտես, ով է հայրս...

**ԵՐԻՍԱՍԱՐԴԻ.** Ես ճանաչում եմ... (Քայլերն ուղղում են դեպի դուռը, վարագույրը իջնում է):

## Բ. Պ. Ա. Տ. Ե. Բ

Նույն դահլիճը, նույն կահսովորութիւնը և նույն պահապանները, խայմարը կամաց կամաց ցրվում է, այդին այլես չը կա, կապույտ մարտիսուղի մեջ գծապրզում է ընդարձակ տարածութիւն, հեռվում երեսում են բաղմաթիվ սպիտակ վրաններ և աղա խորքում անտառ, առաջակողմը հողը ծածկված է զանազան ուղղութեամբ խրամատներով, հրապարակը լիքն է վիրավորներով, կարծ ժամանակից հետո ձախ դռնից մտնում են դահլիճ իշխանուհին և երիտասարդը:

**ԻՇԽԱՆՈՒՀԻ. Այն ամենը... Ինչ վոր այնտեղ ներքեռում տեսա...**

**ԵՐԻԾԱՍԱՐԴ. Եվ այդ բոլորի հեղինակը...**

**ԻՇԽԱՆՈՒՀԻ. Ես այժմ հասկանում եմ թե ինչու են նրանց աչքերը հանդած, ինչու են այնպես կմախք... Այնտեղ լալիս են ամենքը... Իսկ ինչ եղավ ջանդ... Ջանդ հանդավ...**

**ԵՐԻԾԱՍԱՐԴ. Վոչ, ես թողի այնտեղ ներքեռում...**

**ԻՇԽԱՆՈՒՀԻ. (Կանգ է առնում պատուհանների առաջ եվ դիտում). Այլես չը կա մեր գեղեցիկ այգին...**

**ԵՐԻԾԱՍԱՐԴ. Այնտեղ մահն է սավառնում...**

**ԻՇԽԱՆՈՒՀԻ. Հայրս, հարսազատ հայրս... Մեռնում են մարդիկ և հայրս, հայրս...**

**ԻՇԽԱՆ. (Մտնում է). Ե՞ս...**

**ԻՇԽԱՆՈՒՀԻ. Հայրիկ, դու չորս կողմդ մահ ես սփռում... Սպանդանոցների թելերը սկսվում են սեղա-**

նիդ վրա գարսած մատեաններիցդ... Ես կը վոչնչաց  
նեմ մահաբեր մատեաններդ...

ԻՇԽԱՆ. Բազուկներդ թույլ են...

ԵՐԻՍԱՍԱՐԴԻ. Կարծում եք...

ԻՇԽԱՆ. Ո՞վ էք և ինչու էք այստեղ...

ԵՐԻՍԱՍԱՐԴԻ. Ես ամեն տեղ եմ...

ԻՇԽԱՆ. Դուք հանդպնում եք...

ԵՐԻՍԱՍԱՐԴԻ. Ես կանգնած եմ ձեր առաջ ամբողջ  
էութեամբս...

ԻՇԽԱՆ. Եվ այս ամենը իր ականութիւն է...

ԵՐԻՍԱՍԱՐԴԻ. Լույսը բացվելուն պես կը չքանաք...

Չուր էք կարծում, վոր այս պահապանները... (Պահա-  
պանի ձեռքից լինենում է զենքը),

ԻՇԽԱՆ. (Զայրացած պահապաններին). Դուք չը  
գիտեք զենքերը ինչպես պետք է պահել... Ես ձեղ կու-  
ղարկեմ պատերազմի դաշտը և այնտեղ կը սովորեք ձեր  
կիանքի դնուի...

ԵՐԻՍԱՍԱՐԴԻ. Ահա ձեր ստեղծած իրականու-  
թիւնը... Սպանդանոցը... Նայեցեք և զվարձացեք...  
(Խորքում, քանձու մարախուղի մեջ, գծագրվում է դանդաղ  
ժայլերով առաջացող խուռն քոզմութիւն, դրուակներով  
եվ վառած ջահերով):

ԻՇԽԱՆ. (Զայրացած). Ինչպես...

ԻՇԽԱՆՈՒՀԻ. Անցիր առաջ, այդտեղից լավ չէ  
երեսում, (Խեխանը անցնում է դեպի պատուհանները).  
Ահա, տես մոտենաւո՞ւ են վրաններին վառած ջահերով...  
Տես, տես հայրիկ, Նրանք վրանները կրակի են մատ-  
նում... Կրակի բոցերը ուժեղանում են, կրակը լափում  
է (Խեխանը եվ խեխանուհին միասին դիտում են. խոր-

բում վրանները հրդեհվում են, թէ դիրքեցը եկ թէ դահ լիճը լուսավորվում են կարմիր լույսով):

**ԵՐԻԾԱՍԱՐԴԻ.** Մտեղծում են բարիքներ, բայց չեն վայելում... Ուզում են ապրել, ուզում են վայելել աշխարհը ու գալիս են, գալիս են ուժեղ բազուկներով... Դարերի ցնորքներ... Դարերի երազներ...

**ԻՇԽԱՆ.** Խարույկներ...

**ԻՇԽԱՆՈՒՀԻՆ.** Հայրիկ...

**ԻՇԽԱՆ.** Կարմիր խարույկներ... Մահ, մահ դավաճաններին... Կանչեցեք ծառաներին... Եյ, դուք... (մտնում է խորհրդականը):

**ԽՈՐՀՐԴԱԿԱՆ.** Հուզումը անասելի չափերի է հասել, արիւն է հոսում... Ամենքը զինվել են մեր դեմ... պահակները փախչում, ցրիվ են գալիս: Չորս կողմ հրդեհ, կոտորած, արիւն...

**ԵՐԻԾԱՍԱՐԴԻ.** (Մի կողմ). Ամեն ինչ կատարված է...

**ԻՇԽԱՆ.** Թող հոսեն արեան գետեր, միայն թե...

**ԽՈՐՀՐԴԱԿԱՆ.** Վոչ մի միջոցի առաջ կանգ չենք առնում... Սակայն նրանք գալիս են ու գալիս... Թիվ ու համար չունին...

**ԻՇԽԱՆ.** Մտածում ես արդեռք ասածներիդ վրա... Ես հրամայնում եմ ձեզ... Հնչեցրեք շեփորներ... (Խորհրդականը դուրս է գնում). Այսպիսի դավաճանութիւնները արիւնով են մաքրվում...

**ԻՇԽԱՆՈՒՀԻՆ.** Հայրիկ...

**ԻՇԽԱՆ.** Կարմիր խարույկներ... մահ, մահ, դավաճաններին...

(Լսվում է շեփորների ձայներ՝ մտնում են մանուկները վոսկե կաթսայով, դիմում են իշխանուհուն):

Ա. ՄԱՆՈՒԿ Վերցրեք այս կաթսան...

Բ. ՄԱՆՈՒԿ. Արցունքով լցվել է մինչև բերանը...

Ա. ՄԱՆՈՒԿ. Հաղիվ հաղ բերինք...

Բ. ՄԱՆՈՒԿ. Ծալվում են մեր ծնկները...

Ա. ՄԱՆՈՒԿ. Ծանրութիւնից դողում են մեր  
ձեռքերը...

**ԵՐԻՍԱՍԱՐԴԻ.** Վերջին անգամն եք բերում... (Առ-  
նում է կարսան մանուկների ձեռքից). Ես փշում եմ,  
այս կաթսան...

(Ուժեղ թափով ձգում է ցած, կաթսան ջարդ ու փշուր է լինում.  
պահապանները թափում են զենքերը):

**ԻՇԽԱՆ.** Լսում եմ շեփորների ձայներ...

**ԵՐԻՍԱՍԱՐԴԻ.** Հաղթանակի շեփորները այլև  
ձեզ չեն պատկանում...

**ԻՇԽԱՆ.** Այստեղ... Դուք...

**Ա. ՄԱՆՈՒԿ.** Այս կտորները տանենք մեզ հետ...


**Բ. ՄԱՆՈՒԿ.** Տանենք, վոր ցույց տանք և ասենք,  
կաթսան փշովեց...


**ԶԱՅՆԵՐ.** Փշովեց... Փշովեց...

**ԻՇԽԱՆ.** Մահ, մահ, մահ դավաճաններին... Ա-  
նեծք...

(Անշնչացած փոփում է հատուկին, լսվում է մոտեցող շեփորների  
ձայները. պահապանները և մանուկները շտապ—շտապ հավաքում  
են կտորները՝ կրկնելով սփորվեց, փօրվեց):

ՎԱՐԱԳՈՒՅՐԸ ԻԶՆՈՒՄ է:





ԳԻՒՆ Է 10 ԿՈՊ.

ՎՎՀ  
50

ԼՐԵՑԱ ԵՆ ՏԵՍԱԿԱ ԵՎ ՎԱՃԱՎԱԿԱՄ ԵԴ,

1. «Մուշի կամ սրբների տակ», պրամ  
էտիւդ 1 զօրձ.
2. «Մարդաբանություն», պրամա 1 զոր

Դիմել՝ Թիֆլիս «Գյուղականքիր  
հեղինակ Գևորգ Առաքելոց թիւ» մեջը

39  
Դիմում  
Տ - Վ